ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ· ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXIX, № 10, 1976 г.

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ՖԼՈՐԱՅԻ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Լրացավ Սովետական Հայաստանի բարձրլեռնային բուսականության անխոնջ հետազոտողներից մեկի՝ բուսաբան, գեոբոտանիկ, էկոլոգ, կենսաբանական գիտությունների դոկտոր Սիմոն Գասպարի Նարինյանի 70 տարին։

Վեց տարեկան հասակում զրկվելով հորից, պատանի Ս. Նարինյանը տեղափոխվում է Բաքու և աշխատում որպես լրագրավաճառ։ Հետագայում, սակայն, ուսման ծարավը նրան տանում է Թբիլիսի։ Միջնակարգ կրթություն ստանալուց հետո Ս. Նարինյանը վերադառնում է հայրենի Ղարաբաղի Հերհեր գյուղը և հայկական դպրոցում դասավանդում բնագիտություն։

1927 թ. Ս. Նարինյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը։ Սիրված մասնագիտության մեջ խորանալու նկատառումով Ս. Նարինյանը շուտով փոխադրվում է Թբիլիսիի համամիութենական սուբտրոպիկ կուլտուրաների ինստիտուտ, միաժամանակ զբաղվելով մանկավարժությամբ։

1928 թ. ամռանը Ս. Նարինյանը որպես լաբորանտ, մասնակցում է հանրահայտ բուսաբան, անդրկովկասյան ֆլորայի և բուսականության լավագույն գիտակ Ա. Ա. Գրոսհեյմի կազմակերպած Ադրբեջանի արոտների և խոտհարքների ուսումնասիրման գիտարշավին։

Թբիլիսիի համամիութենական սուբտրոպիկ կուլտուրաների ինստիտուտն ավարտելուց հետո, Ս. Նարինյանն ընդունվում է Լենինգրադի համամիութենական բուսաբուծության ինստիտուտի ասպիրանտուրան։ Շփումը ռուսական առաջավոր բուսաբաններ Ն. Ի. Վավիլովի, Ե. Ն. Սինսկայայի, Ի. Ի. Կուպցովի և ուրիշների հետ մեծ դեր է խաղում Ս. Նարինյանի գիտական աշխարհայացքի կազմակերպման գործում։

1934 թ. Ս. Նարինյանը ավարտելով ասպիրանտուրան, կրկին վերադառնում է Թբիլիսիի սուբտրոպիկ ինստիտուտ և աշխատում որպես գիտ. քարտուղար։ 1935 թ. նա մշտական բնակություն է հաստատում Երևան քաղաքում և աշխատանքի անցնում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի բուսաբանության բաժինը։

1941 թ. Ս. Նարինյանը պաշտպանում է «Մայմեխ լեռան սուբալպյան բուսականությունը» թեմայով թեկնածուական դիսերտացիա։ Սակայն երիտասարդ գիտնականին իր ստեղծագործական կյանքի բեղուն ժամանակաշրջանում վիճակված չէր աշխատելու իր սիրած գործով։ Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և Ս. Նարինյանը մեկնում է գործող բանակ։ Գտնվելով Ֆրանսիայում Ս. Նարինյանը զբաղվում է լեռնային ֆլորայի հավաքմամբ։ Այդ նպատակով նա այցելում է Մոնպիլյեր քաղաքը և ծանոթանում աշխարհահռչակ բուսաբան Բրաուն-Բլանկեյի հետ։ Նրանք քննարկում են Ֆրանսիայի ու Հայաստանի ֆլորայի և բուսականության տարածման օրինաչափությունների մասին բազմաթիվ հարցեր։ Բ. Բլանկեն հայ բուսաբանին

է նվիրում իր «Ֆրանսիայի բուսական ծածկույթը», «Միջերկրածովյան բուսականությունը» աշխատությունները մակագրելով՝ «Հարգելի պրոֆեսոր Սիմոն Նարինյանին՝ սովետական գիտնականին, որը կռվել է Ֆրանսիայի ազատության համար»։ Բ.-Բլանկեյի աջակցությամբ Ս. Նարինյանը հավաքում է ավելի քան 500 թերթ հերբարիում և մեծ ջրկանքների գնով տեղափոխում Երևան։ «Թանկագին ավար» նովելը, որը տպագրվել է Մոսկվայում, 1948 թ., նվիրված է Ս. Նարինյանի ֆրանսիական հերբարիումին։ Կարդալով այդ տողերը, չի կարելի երախտագիտության և հպարտության խոր զգացմունք չապրել հայ բուսաբանի նկատմամբ։ Գիտնականի ընդհատումներով լի գործունեությունը ընդգրկել է գեոբոտանիկայի և էկոլոգիայի տեսական և պրակտիկ հարցերի լայն շրջանակ, որոնք լուսաբանվել են 50-ից ավելի գիտական աշխատություններում։ Ս. Նարինյանի բազմամյա գիտահետազոտական աշխատանքների կարևորագույն արդյունքը եղավ «Հայաստանի ալպյան գորգերը» մենագրությունը, որը հաջողությամբ պաշտպանելով, 1967 թ. նա ստացավ կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Ս. Նարինյանը մեծ ավանդ ունի Արագածի ալպիական կենսաբանական կայանի կազմակերպման գործում։ Այդտեղ տարվող էկոլոգիական, գեոբոտանիկական և ֆլորոգենետիկական աշխատանքների արդյունքները բազմիցս զեկուցվել են միութենական գիտաժողովներում և կոնգրեսներում՝ Լենինգրադում, Թբիլիսիում, Դուշանբեում, Ֆրունզեում, Ստավրոպոլում, ստանալով համընդհանուր ընդունելություն։ Միության և արտասահմանյան շատ գիտնականներ (Շախով, Մոթես, Շայդուրով և ուրիշներ) ցանկություն են հայտնել ընկերակցելու կայանի աշխատանքներին։ Առանձնապես ուշագրավ են Ս. Նարինյանի ղեկավարությամբ տարվող Արագածի բարձրլեռնային ֆլորայի կարիոաշխարհագրական ուսումնասիրությունները։

Անվանի գիտնականը գիտահետազոտական աշխատանքը հմտորեն համատեղել է մանկավարժական գործունեության հետ։ Նա շուրջ 15 տարի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և պետական համալսարանում դասավանդել է բուսաբանության հիմունքներ։

Բուսաբանական գիտության բնագավառում Ս. Նարինյանի ձեռք բերած համեստ վաստակը ըստ արժանավույն գնահատվել է կառավարության կողմից։ Նա պարգևատրվել է մի շարք մեդալներով և պատվոգրերով։

Ներկայումս Ս. Նարինյանն ստանձնել է գեոբոտանիկայի և էկոլոգիայի բաժնի կոնսուլտանտի պարտականությունը և իր բազմամյա փորձն է հաղորդում երիտասարդներին։ Նա առանձնապես մտահոգված է Արագածի ալպյան կայանում տարվող գիտահետազոտական աշխատանքներով և հաճախ հանդես է գալիս բարձր լեռնային ֆլորայի և բուսականության դեռևս չլուսաբանված հարցերին նվիրված զեկուցումներով։

Ցանկանք վաստակաշատ բուսաբանին, զգայուն, կարեկից և համեստ կոլեգային քաջառողջություն և ստեղծագործական նորանոր մտահղացումներ, որոնք դեռևս այնքան անհրաժեշտ են մեր բուսաբանական գիտությանը։

Ա. Մ. ԲԱՐՍԵՂՅԱՆ